ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1965—1985 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռ. Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

1965—1985 թթ. Հայկական ԽՍՀ-ի տնտեսական զարգացումը ընթանում էր ԽՍՀՄ ժողովրդական տնտեսությանը բնորոշ՝ էքստենսիվ ճանապարհով։ Դա բնական էր, քանի որ մեր հանրապետության տնտեսությունը ընդգրկված էր Խորհրդային Միության ընդհանուր տնտեսական համալիրի մեջ և կազմում էր նրա մի մասնիկը։ Միաժամանակ, Հայաստանի տնտեսության զարգացումը բնորոշվում էր մի շարք առանձնահատկություններով, որոնք պայմանավորված էին նրա բնակլիմայական պայմաններով, հումքաշխատանքային ռեսուրսների առկայությամբ, արդյունաբերական արտադրության պրոֆիլով և այլն։

Հայտնի է, որ Հայաստանը ունի որոշակի հումքային ռեսուրսներ, ուր բացառությամբ վառելիքային հումքի, առկա են օգտակար հանածոների համարյա բոլոր հիմնական տեսակները։ Հանրապետության տարածքը փոքր է, այն էլ կտրտված ռելիեֆով, որը սահմանափակում է գյուղատնտեսության տարածական զարգացման հնարավորությունները։ Բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական հանդակների քանակով Հայաստանը վերջին տեղն էր գրավում միութենական հանրապետությունների մեջ։ Սակայն, Հայաստանը հարուստ էր աշխատանքային ռեսուրսներով՝ համեմատաբար որակավորված բանվորներով և ինժեներատեխնիկական կադրերով, որոնք էլ պայմանավորեցին հանրապետության առավել ինդուստրիալ զարգացումը։ Այս միտումը (որ բնորոշ էր Հայաստանի նախընթաց ժամանակաշրջանի տնտեսությանը) հատկապես ցայտուն դրսևորվեց 1960—1980-ական թթ. և ամենից առաջ՝ արտահայտվեց արդյունաբերական արտադրության քանակական աճի բարձր տեմպերով, որոնք գերազանցում էին միութենական աճի միջին ցուցանիշները։ Այսպես, եթե ԽՍՀՄ արդյունաբերության զարգացման միջին տարեկան տեմպերը 1960—1970 թթ. կազմում էին 8,5, իսկ 1971—1985 թթ.՝ 5,2 տոկոս, ապա ՀԽՍՀ արդյունաբերության մեջ դրանք համապատասխանաբար կազմում էին 10,5 և 7,2 տոկոս[1]։ Դրա հետևանքով 1970 թ. համեմատությամբ 1985 թվականին Հայկական ԽՍՀ-ի արդյունաբերական արտադրության ծավալն ավելացել էր շուրջ 2,8 անգամ[2]։ Արդյունաբերական արտադրության աճի տեմպերով Հայաստանը 1970—80-ական թվականներին Միության մեջ գրավում էր երկրորդ-երրորդ տեղերը։ Սակայն որակական ցուցանիշներով հանրապետության արդյունաբերական արտադրանքը ոչ միայն զգալիորեն ետ էր մնում համաշխարհային մակարդակից, այլև զիջում էր նույնիսկ միութենական մի շարք հանրապետությունների առանց այն էլ ցածրորակ արտադրանքին։

Հայաստանի արդյունաբերության առավելապես ծավալային զարգացումն ուղեկցվում էր որոշ կառուցվածքային տեղաշարժերով, տարածական տեղաբաշխման փոփոխությամբ և այլն։ Հանրապետության արդյունաբերության հիմնական ճյուղերն էին՝ մեքենաշինությունը, էներգետիկան, քիմիական, լեռնահանքային, թեթև, սննդի և շինանյութերի արդյունաբերությունները, որոնք

---

1 Վ. Խոջաբեկյան, Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացումը Մեծ Հոկտեմբերի 70-ամյակի շեմին (Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, № 11, էջ 4)։

2 Народное хозяйство Армянской ССР в 1985 году. Статистический ежегодник. Ереван, 1986, с. 65.

զարգանում էին էքստենսիվ հիման վրա։ Դա հանգեցնում էր տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և արդյունավետության այլ ցուցանիշների նվազմանը։ Այսպես, օրինակ, հանրապետությունում հասարակական աշխատանքի արտադրողականության միջին տարեկան աճի տեմպերը 1966—1970 թթ. 6,8 տոկոսից 1971—1980 թթ. իջան 4,9 տոկոսի[3]։ Այդ ընթացքում արդյունաբերության մեջ թեև արտադրողականության աճի տեմպերը մնացին անփոփոխ, բայց 1980-ական թթ. սկզբներից սկսեցին իջնել։ Շինարարության մեջ այն 1971—1975 թվականների 7,2 տոկոսից. 1975—1980 թթ. իջավ 3,2 տոկոսի, երկաթուղային տրանսպորտում ևս նույնը կատարվեց[4]։ Հայաստանի ժողովրդատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը 1980-ական թթ. սկզբին զգալիորեն զիջում էին ԽՍՀՄ միջին ցուցանիշին։ Դա մասնավորապես հանրապետության արտադրության ճյուղային կառուցվածքի և արտադրանքի տեսականու հաճախակի, անհիմն փոփոխման, արտադրության խիստ անբավարար մեքենայացման ու ավտոմատացման, նրա տեխնիկական մաշվածության (հին մակնիշի մեքենաներն ու սարքավորումները շատ դանդաղ էին փոխարինվում նորերով), ինչպես նաև աշխատանքի վատ կազմակերպման հետևանք էր։

ԽՍՀՄ-ում խիստ կենտրոնացված, վարչահրամայական կառավարման պայմաններում, հանրապետական կոմունիստական իշխանությունները ամեն գնով ձգտում էին կուրորեն կատարել միութենական կենտրոնական մարմինների որոշումներն ու կարգադրությունները, նույնիսկ չխորանալով վերջիններիս էության մեջ։ Իսկ կենտրոնը վարում էր կայսերապետության շահերից բխող ամբողջատիրական սոցիալ-տնտեսական քաղաքականություն, որը հիմնականում ոչ միայն հաշվի չէր առնում հանրապետությունների շահերը, այլև հաճախ ոտնահարում էր դրանք։ Այն իր արտացոլումն էր գտնում նաև Հայաստանում, որտեղ 1960—1970-ական թթ., հաճախ, արդյունաբերության նոր ճյուղերը ստեղծելիս անտեսվում էին համապատասխան հումքով և էներգիայով հանրապետության ապահովվածության ցածր մակարդակը, բնակչության զարգացման տվյալ փուլի ժողովրդագրական առանձնահատկությունները, երիտասարդ աշխատուժի առավել արդյունավետ օգտագործման, բնակչության և արտադրության տեղաբաշխման հարցերը։ Դա մասնավորապես վերաբերում էր քիմիական և հանքահումքային արդյունաբերության մի շարք ճյուղերի առավել արագ տեմպերով զարգացմանը։ Թեև այն ուղեկցվում էր ճյուղային կառուցվածքի որոշ տեղաշարժերով, բայց անտեսվում էին առանձին արտադրությունների էներգատարությունը, հանրապետության ջրային ռեսուրսների լարվածությունը, բնակլիմայական պայմանները, մասնավորապես բնակչության բարձր խտությունն ու բնապահպան գործոնները։

Հատկապես վերջիններիս անտեսումը իր բացասական ազդեցությունն էր թողնում հանրապետության մի շարք քաղաքների, առանձին շրջանների մթնոլորտի մաքրության վրա։ Լեռներով շրջապատված, փոքր տարածք ունեցող Հայաստանում, ավելի քան 40 քիմիական և լեռնահանքային ձեռնարկությունների կենտրոնացումը հանրապետությունում էկոլոգիական աղետալի իրավիճակ էր ստեղծել[5]։ Ելնելով արդյունաբերության զարգացման շահերից, անտեսվում էին նաև հողային ռեսուրսների բնականոն օգտագործման խնդիրները։ Մասնավորապես Երևանի և Արարատյան դաշտավայրի այլ քաղաքների շրջակայքերում գործարանային շենքեր ու բնակելի զանգվածներ կառուցելու համար ոչնչացվեցին հազարավոր հեկտար խաղողի ու պտղատու այգիներ։

---

3 Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 7։

4 Նույն տեղում։

5 Комсомольская правда, 21. II. 1988.

Արդյունաբերական նորանոր ձեռնարկությունների ստեղծումը չէր զուգակցվում որակյալ աշխատուժի հիմնախնդրի լուծման հետ։ Ուստի, նորաստեղծ արտադրությունները, հատկապես 1970-ական թթ. (երբ հանրապետության բնակչության կազմում խիստ բարձր էր աշխատանքային տարիքի մարդկանց տեսակարար կշիռը), հիմնականում համալրվում էին համապատասխան որակավորում չունեցող և նախկինում անձնական օժանդակ ու տնային տնտեսություններում զբաղվող աշխատուժով։ Դրա հետևանքով էլ ավելի էին ընդլայնվում արտադրության աճի էքստենսիվ գործոնի գործողության շրջանակները։ Արդյունաբերության մեջ պակասում էր աշխատանքի արտադրողականության հաշվին ստեղծվող արտադրանքի բաժինը։ Թողարկվող արտադրանքի պլանների կատարումը հիմնականում ապահովվում էր աշխատողների թվաքանակի ավելացման և արտադրական տեղամասերի ծավալների ընդլայնման հաշվին։ Այսպես՝ 1961—1975 թթ. արդյունաբերության մեջ աշխատողների միջին տարեկան աճը (5,7 %) գերազանցում էր աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը (4,5 %)[6]։ 1965—1985 թթ. արտադրության էքստենսիվ աճը բնորոշ էր հանրապետության արդյունաբերության բոլոր ճյուղերին։ Այս առումով հատկապես բնութագրական ցուցանիշներ ուներ մեքենաշինությունը։ Միայն 1970—1985 թթ. Հայաստանի արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալում մեքենաշինության և մետաղամշակման տեսակարար կշիռը 15,8 տոկոսից հասավ 30,3 տոկոսի[7], իսկ մեքենաշինական և մետաղամշակման արտադրանքի ծավալն աճեց ավելի քան 5 անգամ[8]։ Եթե 1971—1985 թթ. Միության մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության միջին տարեկան աճի տեմպերը կազմում էին 8,6, ապա՝ ՀԽՍՀ-ում 11,8 տոկոս[9]։

Հանրապետության բազմաճյուղ մեքենաշինության կառուցվածքում առաջատար դերը պատկանում էր էլեկտրատեխնիկային, սարքաշինությանը, հաստոցաշինությանը, գործիքաշինությանը։ Հայկական ԽՍՀ-ն էլեկտրատեխնիկական արտադրանքի թողարկման ծավալով ԽՍՀՄ-ում գրավում էր երրորդ (ՌԽՖՍՀ-ից և Ուկրաինայից հետո), սարքաշինության ծավալով՝ չորրորդ, հաստոցաշինության գծով՝ հինգերորդ տեղերը։ Հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունները թողարկում էին էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ավտոմատացման և կառավարման միջոցներ, բազմատեսակ սարքեր, հաստոցներ, ավտոմոբիլներ, ինքնաթափիչներ, տրանսֆորմատորներ, կոմպրեսորներ, որոնք իրենց տեխնիկական ցուցանիշներով զգալիորեն հետ էին մնում համաշխարհային մակարդակից և չէին բավարարում տվյալ ժամանակաշրջանի նույնիսկ տարրական պահանջները։ Դա հիմնականում մեքենաշինության բնագավառում տարիների ընթացքում կուտակված և այդպես էլ իրենց լուծումը չստացած բազմաբնույթ պրոբլեմների առկայության հետևանքն էր։ Մասնավորապես, մեքենաշինության ճյուղերի գերատեսչական տարանջատվածությունը, բազմապրոֆիլայնությունը և միջճյուղային (ինչպես նաև ներճյուղային) մասնագիտացման ու կոոպերացման համարյա լիակատար բացակայությունը զգալիորեն խոչընդոտում էին նրա զարգացմանը։ Այս բնագավառի խոշոր ձեռնարկությունները՝ «Հայէլեկտրամեքենա», «Հրազդանմաշ» և այլն, այդպես էլ չդարձան գիտատեխնիկական առաջընթացի կոնկրետ ուղղությունների առաջատարներ։ 1960—1980-ական թթ. հանրապետության մեքենաշինությանը հիմնականում բնորոշ էր ոչ թե պատրաստի, այլ համալրող (կոմպլեկտավորող) արտադրանքի թողարկումը։ Ընդհանուր առմամբ այս ճյուղում վերջնական արտադրանքի տեսակարար կշիռը չէր

---

6 Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 8։

7 Народное хозяйство Армянской ССР в 1985 году, с. 70.

8 Նույն տեղում, էջ 65։

9 Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 4։

անցնում 25—30 տոկոսից, իսկ ժողովրդական լայն սպառման ապրանքների թողարկումը՝ 10—15 տոկոսից[10]։ Նրա արտադրանքի զգալի մասը (մոտ 85 տոկոս) կազմում էին արտադրության միջոցները։ Հզոր գիտական պոտենցիալի առկայության պայմաններում, հանրապետությունում բավարար չափով չէին զարգանում ողջ աշխարհում լայն թափ ստացած միկրոէլեկտրոնիկական, ռոբոտային տեխնիկան, անհատական կոմպյուտերների և ջերմասարքավորումների արտադրությունները։ Դրա փոխարեն այստեղ շարունակվում էր առանձին հանգույցների ու մասերի թողարկումը, որոնք վերջնական պատրաստի արտադրանքի էին վերածվում Հայաստանի սահմաններից դուրս։

Մեքենաշինության մեջ գոյություն ունեցող նման իրավիճակը բացասաբար էր անդրադառնում հանրապետության ողջ արդյունաբերության տեխնիկական զինվածության մակարդակի վրա։ Այսպես՝ 1980-ական թթ. առաջին կեսին արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման միայն 36 տոկոսն էր ապահովվում նոր տեխնիկայի ներդրման հաշվին[11]։ Համապատասխանաբար նվազում էին նաև մեքենայացված ու ավտոմատացված գծերի ներդրման տեմպերը և գործարկման հզորությունները, ինչը՝ խոչընդոտում էր հանրապետության ժողովրդական տնտեսության ինտենսիվ (որակական) զարգացմանը։

1960-ական թթ. կեսերից սկսած կարևոր փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության էներգետիկ արտադրության մեջ։ Մինչ այդ Հայաստանի էներգետիկայի հիմնական արտադրողը հիդրոէլեկտրակայանների Սևան-Հրազդան կասկադն էր։ Վերջինիս կառուցումը խորհրդային հասարակարգին բնորոշ վարչահրամայական համակարգի վրա հիմնված, տնտեսական քաղաքականության ցայտուն դրսևորում էր, երբ ամեն գնով տնտեսական պրոբլեմների հրատապ, ժամանակավոր լուծման ձգտումը թույլ չէր տալիս խորանալու դրա հետագա հետևանքների մեջ. անտեսվում էին կենսոլորտի, սոցիալական և քաղաքական հույժ կարևոր ու կենսական հարցեր։ Այս առումով Սևան-Հրազդան կասկադը թեև տալիս էր հանրապետության ողջ էլեկտրաէներգիայի 95 տոկոսը, սակայն Սևանա լճի մակարդակի կտրուկ իջեցման պատճառ դարձավ։ Առաջացավ հանրապետության ջրային շտեմարանի ցամաքելու լուրջ սպառնալիք, ինչը կխաթարեր առանց այն էլ սակավաջուր Հայաստանի ջրային հաշվեկշիռն ու կլիման։ Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ձեռնարկվեցին Սևանը փրկելու միջոցներ։ 1960-ական թթ. կառուցվեցին Երևանի, Հրազդանի, Կիրովականի հզոր ջերմաէլեկտրակայանները, որոնք արդեն 1970-ական թթ. սկզբներին ավելի շատ էլեկտրաէներգիա էին արտադրում, քան գործող ՀԷԿ-երը։ Ըստ էության, Հայաստանը մաքուր «հիդրոէներգետիկ» հանրապետությունից վերածվեց առավելապես «ջերմաէներգետիկի»։ Այս ամենին զուգընթաց սկսվեց Որոտանի կասկադի շինարարությունը, որի առաջնեկը՝ Տաթևի ՀԷԿ-ը, գործարկվեց 1970 թ.։ Սակայն դրանից հետո, կասկադի շինարարությունը ձգձգվեց և տևեց երեթե քսան տարի։

Նշված միջոցառումները հնարավորություն տվեցին Սևան-Հրազդան կասկադը գերազանցապես օգտագործել ոռոգման նպատակներով, ինչը որոշ չափով կասեցրեց լճի մակարդակի իջեցումը։

Սևանա լճի մակարդակը բնականին մոտ պահպանելու նպատակով, դեռևս 1961 թվականին, որոշվեց կառուցել 48 կիլոմետրանոց ջրատար թունել, որպեսզի վերջինիս միջոցով, Արփա գետի ջրի մի մասը հոսի դեպի լիճ։ Այս եզակի հիդրոտեխնիկական կառույցի շինարարությունը, որը վիթխարի ծախսերի գնով կատարվում էր արտակարգ բարդ բնական պայմաններում, տևեց քսան տարի։ 1981 թ. Արփա-Սևան թունելը շահագործման հանձնվեց։ Հետագա հինգ տարիների ընթացքում Սևանա լիճը Արփա գետից ստացավ

10 Коммунист, 17. V. 1989.

11 Հայաստանի կոմունիստական կուսակցության 28-րդ համագումարի նյութերը. Երևան, 1986, էջ 10։

մոտ 1 միլիարդ խորանարդ մետր ջուր, ինչը ոչ միայն կասեցրեց լճի մակարդակի իջեցումը, այլև որոշակիորեն բարձրացրեց[12]։ Սակայն շինարարական աշխատանքների ցածր որակի հետևանքով 1980-ական թթ. կեսերին թունելի առանձին հատվածներում ճեղքվածքներ ու փլուզումներ առաջացան։ Ջրատարի շահագործումը դադարեցվեց և սկսեցին վերականգնողական աշխատանքները։ Վերջիններիս ավարտից հետո 1988 թ. սկզբին Արփա-Սևան թունելը վերստին սկսեց գործել և նույն տարում լճի մակարդակը բարձրացավ 19 սմ-ով[13]։ Դեռևս 1970-ական թթ. ակնհայտ էր դարձել, որ Սևանի մակարդակի պահպանմամբ և նույնիսկ բարձրացմամբ անհնար էր փրկել լիճը, քանի որ վերջինիս վրա կործանարար ազդեցություն էր ունենում նաև նրա ջրերի խիստ աղտոտվածությունը։ Եվ չնայած նշված ժամանակաշրջանից սկսած, Սևանա լճի մաքրության ու նրա բնական հարստությունների պահպանման վերաբերյալ կառավարական (այդ թվում և միութենական) տասնյակ որոշումներ ընդունվեցին, բայց դրանցից ոչ մեկը այդպես էլ չիրականացվեց։ Լճի մաքրությանը և նրա բնական հարստություններին շարունակում էին վնասել առափնյա գոտում տարվող, տարբերական մաքրման համակարգերից զուրկ շինարարական աշխատանքները, ջրային ռեսուրսների անխնա օգտագործումը, շրջակա գյուղատնտեսական հողատարածություններում հանքային պարարտանյութերի ու թունաքիմիկատների չվերահսկվող կիրառումը, ձկնագողությունը և այլն։ Այս ամենի հետևանքով, Սևանա լճի էկոլոգիական վիճակը աստիճանաբար վատթարանում էր՝ շարունակելով մնալ հանրապետության չլուծված կարևորագույն կենսական պրոբլեմներից մեկը։

Հայաստանի էներգետիկ պահանջների լիակատար բավարարման նպատակով, 1969 թ. սկսվեց հայկական ատոմակայանի շինարարությունը, որի առաջին էներգաբլոկը (405 հազար կվտ հզորությամբ) գործարկվեց 1976 թ., իսկ երկրորդը՝ (410 հազար կվտ)՝ 1979 թ. վերջին։ Դրա հետևանքով հանրապետությունում զգալիորեն ավելացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը և նրա աճի տեմպերը սկսեցին գերազանցել արդյունաբերության աճի տեմպերին։ Ավելին, Հայաստանը սկսեց ավելի շատ էլեկտրաէներգիա արտադրել, քան կարող էր սպառել։ Ուստի ավելցուկային մասը տրամադրվում էր հարևան հանրապետություններին։ Հայկական ատոմակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի 40 %-ն սպառում էր Ադրբեջանը, 35 %-ը՝ Վրաստանը և միայն 25 %-ը՝ Հայաստանը[14]։ Սակայն, չնայած իր ունեցած տնտեսական մեծ նշանակությանը, Հայկական ատոմակայանի կառուցումը հանրապետության գյուղատնտեսության հիմքը հանդիսացող, խիտ բնակեցված Արարատյան դաշտավայրում, որը նաև ակտիվ երկրաշարժային գոտի ու արտեզյան ներքին ջրերի խոշորագույն ավազան էր, խիստ սխալ ու անհեռատես տեխնոկրատական քաղաքականության իրագործման հետևանք էր։ Եթե դրան ավելացնենք նաև խորհրդային գրեթե բոլոր կառույցներին բնորոշ ցածրորակությունն ու տեխնիկական հետամնացությունը, ապա քաղաքամայր Երևանի (ուր կենտրոնացված էր հանրապետության բնակչության մեկ երրորդը) անմիջական հարևանությամբ գործող ատոմակայանը լուրջ վտանգ էր ներկայացնում հայ ժողովրդի համար։

1965—1985 թթ. տեղաշարժեր էին տեղի ունենում նաև քիմիական արդյունաբերության ներճյուղային կառուցվածքում։ Ճյուղ, որի ստեղծումը խիստ սահմանափակ տարածք և բավական խիտ բնակչություն ունեցող, վառելիքային հումքից լիովին զուրկ ու սակավաջուր Հայաստանում, ոչ այլ ինչ էր, քան սոցիալիստական «գլխապատառ» ինդուստրացման տխուր հետևանք։ Հիմնականում Երևանում, Կիրովականում և Ալավերդում տեղակայված քի-

12 Коммунист, 5. I. 1988.

13 Սովետական Հայաստան, 6. IX. 1988։

14 Վ. Ե. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 167։

միական ձեռնարկությունները թողարկում էին տնտեսության համար կարևոր արտադրատեսակներ՝ սինթետիկ կաուչուկ, արհեստական մանրաթելեր, ավտոդողեր, կարբիդ, ազոտաթթու, քացախաթթու, զանազան ներկեր ու լաքեր և այլն։ Սակայն այս ձեռնարկությունները, ժամանակի պահանջներին ամենևին չհամապատասխանող իրենց տեխնիկական ցածր մակարդակի հետևանքով ամենուրեք աղտոտում էին միջավայրը և լարվածություն ստեղծում հանրապետության ջրային ու էներգետիկ համակարգում։ Թեև սկսած 1970-ական թթ. կեսերից Հայաստանում որոշ չափով կասեցվեց «մեծ քիմիայի», զարգացումը, և այն աստիճանաբար վերափոխվեց «փոքր՝ կենցաղային քիմիայի», որին բնորոշ էին սպիտակուցային նյութերի, վիտամինների, դեղանյութերի, միկրոկենսաբանական պրեպարատների, քիմիական ռեակտիվների արտադրությունները, սակայն, այնուամենայնիվ, հանրապետությունում էկոլոգիական և ջրատնտեսական լարվածությունը չնվազեց։ Վերջինս նաև լեռնահանքային արդյունաբերության զուտ էքստենսիվ զարգացման հետևանք էր, որը կենտրոնացված էր Ղափանում, Քաջարանում, Ագարակում, Ալավերդում և այլուր։ Լեռնահումքային արդյունաբերությունը գերազանցապես զարգանում էր հանույթի ծավալների արագ ավելացման և դրանից սոսկ հիմնական հումքատեսակների կորզման ուղիով։ Շատ արժեքավոր, հազվագյուտ ու ցրված այլ հումքատեսակների մեծ կորուստներ էին տեղի ունենում և, ըստ էության, բավական հարուստ հանքավայրերի միայն չնչին մասն էր շահագործվում։

Գրեթե նման իրավիճակում էր շինանյութերի արդյունաբերությունը, որի զարգացման հիմքը հումքային ռեսուրսների հսկայական պաշարների առկայությունն էր, մասնավորապես տուֆի, բազալտի, ավազի և այլն։ 1970—1985 թթ. այդ ճյուղի արտադրանքի ընդհանուր ծավալն ավելացավ 1,8 անգամ[15]։ Հայաստանում արտադրվում էր ցեմենտ, գաջ, հավաքուլի երկաթբետոնային կոնստրուկցիաներ, երեսպատման սալիկներ, պերլիտ, բյուրեղապակի և այլն։ Բայց հիշյալ արդյունաբերությունը ևս իր տեխնիկական հագեցվածությամբ գտնվում էր խիստ ցածր մակարդակի վրա։ Այստեղ հիմնականում գերիշխում էր ձեռքի ծանր, ֆիզիկական աշխատանքը, ինչը բացասաբար էր անդրադառնում արտադրանքի որակի վրա։

1960—1980-ական թթ. Հայաստանի արդյունաբերության ընդհանուր ծավալում մեքենաշինությունից հետո երկրորդ տեղում էր թեթև արդյունաբերությունը։ Վերջինս բազմաճյուղ էր և ուներ «մանածագործական, կարի, կոշիկի, կաշեգործական և գորգագործական մի շարք ձեռնարկությունների մասնաճյուղեր, որը պայմանավորված էր բնակչության զբաղվածության ապահովման, հատկապես հանրային արտադրության մեջ կանանց ներգրավման հիմնախնդրով։ Դա նպաստեց թեթև արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի գրեթե կրկնապատկմանը։ Սակայն չնայած արտադրանքի քանակի բացարձակ աճին, այնուհանդերձ, այս ճյուղի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական ամբողջ արտադրանքի ծավալում մնում էր 22—24 տոկոսների սահմաններում[16]։ Սա բացատրվում է խորհրդային ողջ տնտեսությանը բնորոշ լճացման երևույթների խորացմամբ, քանի որ հիմնական շեշտը դրվում էր նոր արտադրական հզորությունների շահագործման հանձնելու ու դրանց ընդլայնման և ոչ թե գոյություն ունեցողների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու վրա։ Հայաստանում 1970-ական թվականներին արտադրական կապիտալ ներդրումների մոտ երկու երրորդը օգտագործվում էր արտադրության ընդլայնման համար։ Նման քաղաքականություն կիրառվում էր նաև թեթև արդյունաբերության բնագավառում, որ հանգեցնում էր հին ֆոնդերի կուտակմանն ու ճյուղի արտադրությունների

---

15 Народное хозяйство Армянской ССР в 1985 году, с. 65.

16 Նույն տեղում, էջ 70։

տեխնիկական վիճակի խիստ վատթարացմանը։ Իսկ դա, իր հերթին, խոչընդոտում էր թեթև արդյունաբերության ինտենսիվ, որակական զարգացմանը։

Հանրապետության սննդի արդյունաբերությունը միավորում էր ավելի քան 100 ձեռնարկություն։ Նրա հիմնական ենթաճյուղերն էին գինեգործությունը, պահածոների արտադրությունը, հացագործությունը, կաթնամսամթերքների արտադրությունը։ Համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ ունեին Հայաստանի անվանի կոնյակը, գինու որոշ տեսակներ։ Միութենական հանրապետություններ էին արտահանվում Հայաստանում արտադրվող պանիրը, պահածոները և այլ ուտելիքներ։ Սակայն սկսած 70-ական թթ. վերջերից սննդարդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական ողջ արտադրանքի ծավալում աստիճանաբար նվազում էր։ Այն հիմնականում կապված էր գյուղատնտեսության անբավարար վիճակի հետ, որը տարեցտարի այլևս չէր կարողանում համապատասխան հումքով բավարարել այս ճյուղի պահանջները։ Սննդի արդյունաբերության զարգացմանը որոշակիորեն խոչընդոտում էր նաև գյուղատնտեսական մթերքների պահեստավորման ու պահպանման համար նախատեսված շենքերի զգալի պակասը, որն ամենից առաջ գյուղական շինարարության վատ կազմակերպման հետևանք էր։ Հանրապետության համապատասխան գերատեսչությունները, ըստ էության, միայն ձևականորեն էին զբաղվում գյուղատնտեսական օբյեկտների շինարարությամբ։ Նրանք հիմնականում ծանրաբեռնված էին ագրոարդյունաբերական համալիրի հետ ոչ մի կապ չունեցող աշխատանքներով։ Այս և նման երևույթները հետզհետե արգելակում էին սննդի արդյունաբերության լիարժեք զարգացումը։

Քննվող ժամանակաշրջանում աստիճանաբար վատթարանում էր նաև հանրապետության գյուղատնտեսության վիճակը։ Նրա մասնագիտական ուղղությունը բնորոշող հիմնական ճյուղերն էին՝ խաղողագործությունը, բանջարաբուծությունը և պտղաբուծությունը (ծիրան, դեղձ և այլն)։ Սակայն գյուղատնտեսության պլանավորման, ֆինանսավորման և վարկավորման բնագավառներում թույլ տրված կամային գործողությունները, տնտեսական օբյեկտիվ օրենքների ոտնահարումը, աշխատավորների հասարակական և անձնական շահերի ոչ ճիշտ զուգորդման պրակտիկան, հաճախակի կատարվող մտացածին վերակառուցումները, կոլտնտեսությունների խոշորացման ընթացքում տեղական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների անտեսումը, մի շարք կոլտնտեսությունների տնտեսապես չհիմնավորված վերափոխումը հանգեցրին գյուղատնտեսական արտադրության տեմպերի խիստ անկմանը։ Այսպես, եթե 1961—1970 թթ. ՀԽՍՀ գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության միջին տարեկան տեմպերը կազմում էին 3,5 %, ապա 1971—1980 թթ.՝ 1,8, իսկ 1981—1985 թթ. լոկ 1 %[17]։

Ստեղծված նման ծանր կացությունը հանրապետության գյուղատնտեսության թեկուզև սահմանափակ հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման հետևանք էր։ Մասնավորապես, դանդաղ էր կատարելագործվում նրա ճյուղային կառուցվածքը, որը կապված էր մասնագիտացման անբավարար խորացման հետ։ Մասնագիտական լիարժեք խորացումը հատկապես կարևոր էր սակավահող Հայաստանի համար, քանի որ կնպաստեր գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը։ Սակայն ոչ միայն եղած բերրի հողատարածությունները լիարժեք չէին օգտագործվում, այլև գյուղատնտեսական աշխատանքների վատ կազմակերպման հետևանքով եկամտաբեր շատ կուլտուրաներ բարձր բերք չէին ապահովում, իսկ ստացված բերքի մի մասն էլ փչանում էր դեռևս մթերակայան չհասած։

17 Վ. Խոջաբեկյան, Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացումը Մեծ Հոկտեմբերի 70-ամյակի շեմին, էջ 11։

Հատկապես անբավարար էր վիճակը անասնապահությունում։ Տարեցտարի կրճատվում էր նրա համախառն արտադրանքը, ինչի հետևանքով հանրապետությունում մսի և կաթնամթերքի խիստ պակաս սկսեց զգացվել։

Այս ամենի հետ մեկտեղ ՀԽՍՀ-ում 1965—1985 թթ. ոչ միայն իջնում էր գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը, այլև պակասում էր նրանց բացարձակ թիվը։ Ընդ որում հանրապետության գյուղատնտեսության մեջ զբաղվածների (ներառյալ նաև անձնական օժանդակ տնտեսություններում աշխատողների) բացարձակ թիվը, 1965 թ. համեմատ 1985 թ. պակասել էր զգալի չափով։ 1960-ական թթ. վերջերը այն սահմանագիծն էին, երբ Հայաստանի գյուղատնտեսությունը բնակչության գերակշռող մասը զբաղեցնողի իր երբեմնի դիրքերը վերջնականապես զիջեց արդյունաբերությանը։ Թեև հետագայում կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների անձնական օժանդակ տնտեսությունների սահմանների ընդարձակումը հանգեցրին գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության բացարձակ թվի որոշ ավելացմանը, սակայն այն էապես չազդեց գյուղատնտեսության վիճակի վրա։

Այսպիսով, 1960—1980-ական թթ. Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման ոլորտներում լուրջ դժվարություններ էին առաջ գալիս, որոնք աստիճանաբար խորանալով, հանրապետության տնտեսությունը ճգնաժամային իրավիճակի եզրին կանգնեցրին։ Դրան նպաստեցին նաև կապիտալ շինարարության բնագավառում թույլ տրված կոպիտ սխալները։ Հիմնական կապիտալ ներդրումները ուղղվում էին նոր ձեռնարկությունների կառուցմանը, որոնց շահագործման ու յուրացման ժամկետները շարունակ ձգձգվում էին, իսկ հների վերակառուցումը և նորոգումը կատարվում էր դանդաղ տեմպերով՝ հանգեցնելով դրանց արտադրական հզորությունների թուլացմանն ու ծերացմանը։

1970-ական թթ. արդյունաբերության տարածական տեղաբաշխումը կատարելագործելու նպատակով, մի շարք փոքր քաղաքներում, շրջկենտրոններում ու գյուղերում նոր ձեռնարկություններ և մասնաճյուղեր կառուցվեցին։ Եվ եթե մինչ այդ արդյունաբերությունը կենտրոնացված էր Երևանում, մասամբ՝ Լենինականում (Գյումրի) և Կիրովականում (Վանաձոր), ապա այժմ արդյունաբերական խոշոր համալիրներ ստեղծվեցին Չարենցավանում, Աբովյանում, Սևանում, Հրազդանում, Սպիտակում, Դիլիջանում, Իջևանում, Կամոյում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում (Արմավիր) և այլ քաղաքներում ու շրջաններում։ Դա հետամտում էր հանրապետությունում արտադրողական ուժերի տեղաբաշխման ոլորտում գոյություն ունեցող խիստ անհամամասնության վերացումը։ Հայաստանի բնակչության մեծ մասը ապրում էր քաղաքներում։ Վերջիններիս բնակչության թվաքանակը 1960 թ. մոտ 900 հազարից 1985 թ. հասավ շուրջ 2 մլն 242 հազարի, որը կազմում էր հանրապետության ողջ բնակչության ավելի քան 67 տոկոսը[18]։ ԽՍՀՄ-ում ոչ մի հանրապետություն քաղաքային բնակչության աճի նման թափ չուներ։ Միաժամանակ, Հայաստանի քաղաքային բնակչության ավելի քան 60 տոկոսը կենտրոնացած էր հիմնականում Երևանում և մասամբ՝ Լենինականում ու Կիրովականում, որոնց բաժին էր ընկնում 1965—1985 թթ. ընթացքում հանրապետության քաղաքային բնակչության ամբողջ աճի ավելի քան 55 տոկոսը[19]։ Դրա հետևանքով, հիշյալ քաղաքներում էր կենտրոնացած Հայաստանի արդյունաբերական անձնակազմի և թողարկվող արտադրանքի հիմնական ֆոնդերի մոտավորապես 2/3-ը։ Այս ամենը, ընդհանուր առմամբ, խիստ բացասաբար էր անդրադառնում հանրապետության տարբեր շրջանների համաչափ զարգացման վրա։ Ստեղծված իրադրությունից ելնելով, հանրապետությունում արդյունաբերության աշխարհագրության ընդլայնման ուղեգիծ

---

18 Народное хозяйство Армянской ССР в 1985 году, с. 7.

19 Երեկոյան Երևան, 16. I. 1989։

վերցվեց։ Սակայն, ինչպես կյանքը ցույց տվեց, եթե այն որոշ չափով նպաստեց գյուղական շրջաններում բնակչության զբաղվածության ապահովմանը, ապա նրա սոցիալական արդյունքը գնալով ավելի ու ավելի խոր հակասության մեջ էր մտնում տնտեսական նպատակահարմարության հետ։ Բանն այն էր, որ փոքր քաղաքներում ստեղծված արդյունաբերական նոր ձեռնարկությունները ու մասնաճյուղերը, որպես կանոն, հիմնված էին բարոյապես ու ֆիզիկապես հնացած տեխնիկական սարքավորումների վրա և անբավարար էին ապահովված բարձրորակ կադրերով ու մասնագետներով։ Ուստի, տեխնիկատնտեսական ցուցանիշներով դրանք 2—4 անգամ զիջում էին իրենց գլխամասային ձեռնարկություններին, որ բացասաբար էր անդրադառնում նաև նրանց թողարկած արտադրանքի որակի վրա[20]։ Նշված ուղեգծի իրագործումը այդպես էլ լիովին չկարգավորեց հանրապետությունում տեղի ունեցող միակողմանի միգրացիոն գործընթացը։ Մասնավորապես հեռավոր լեռնային ու նախալեռնային շրջաններից շարունակվում էր բնակչության արտահոսքը դեպի խոշոր արդյունաբերական կենտրոններ, ինչը արտադրության տարածքային կազմակերպման մտածված կառույցների բացակայության հետևանք էր (երբ նոր ձեռնարկությունների ստեղծման և դրանց կենտրոնացման հարցերը հիմնականում լուծվում էին կամայականորեն, հասարակական կարծիքի բացահայտ անտեսման ճանապարհով)։ 1980-ական թթ. Սիսիանի (Վայքի), Ապարանի, Արագածի, Ղափանի, Շամշադինի (Տաուշի), Գորիսի և Հայաստանի այլ լեռնային շրջանների համարյա յուրաքանչյուր երկրորդ գյուղը բնակչության խիստ կրճատման հետևանքով, ամբողջովին պարպվելու եզրին էր կանգնած։ Ընդ որում, բնակչության միգրացիան ոչ միայն ներհանրապետական բնույթ ուներ, այլև տարածված էր նաև Հայաստանի սահմաններից դուրս։ Եթե 1976—1980 թթ. միգրացիայի հաշվին հանրապետության բնակչության թվաքանակը հազար բնակչի հաշվով ավելացավ մեկ մարդով, ապա 1981—1985 թվականներին, ընդհակառակը՝ պակասեց երեքով[21]։ 1960-ական թթ. վերջերից աստիճանաբար սկսվեց և հետզհետե լայն թափ ստացավ Հայաստանի բնակչության որոշակի մասի՝ արտասահման մշտական բնակության մեկնելու գործընթացը։ Վերջինս հատկապես ուժեղացավ 1980-ական թթ., երբ միայն տասը տարում արտասահման արտագաղթեց ավելի քան 35 հազար հայ, որոնցից 27 հազարը՝ ԱՄՆ[22]։ Դա խիստ բացասական հետևանք ունեցավ հանրապետության ժողովրդագրական, ուրեմն նաև տնտեսական վիճակի վրա։ Արտագաղթողները հայրենիքը լքելու հիմնական պատճառների շարքում նշում էին՝ սոցիալ-կենցաղային նորմալ պայմանների բացակայությունը, խորհրդային հասարակարգում լայն տարածում ստացած սոցիալական անարդարություններն ու բյուրոկրատական քաշքշուկները, կատարված աշխատանքի նկատմամբ ունեցած անբավարարվածությունն ու անտարբերությունը և այլն։

Դրան զուգընթաց, տարեկան մոտ 20 հազար մարդ (հիմնականում ակտիվ, որակյալ բանվորական ուժի ներկայացուցիչներ), դրամ վաստակելու նպատակով Հայաստանից արտագնա աշխատանքի էր մեկնում ԽՍՀՄ այլ հանրապետություններ ու տարածքաշրջաններ[28]։ Նրանք այնտեղ հիմնականում զբաղվում էին սեզոնային աշխատանքներով և մի քանի ամսից հետո տուն վերադառնալով, առանց աշխատանքի տեղավորվելու, մինչև հաջորդ սեզոն, սպառում էին իրենց վաստակը։ Եվ դա այն դեպքում, երբ հանրապետության լեռնային ու նախալեռնային շրջանները աշխատուժի խիստ կարիք ունեին։

---

20 Коммунист, 15. IX. 1988.

21 Նույն տեղում։

22 Советская культура, 14. IV. 1990; The California courier, 1. XII. 1989.

23 Коммунист, 24. II. 1989.

Լեռնային ու նախալեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը զգալիորեն խոչընդոտում էր նաև հանրապետության ճանապարհատրանսպորտային համակարգի ոչ բարվոք վիճակը։ Թեև 1960—80-ական թթ. կառուցվեցին Սևան—Շորժա—Զոդ, Մասիս—Նուռնուս, Իջևան—Հրազդան երկաթուղիները, Երևան—Սևան, Երևան—Հոկտեմբերյան, Մեղրի—Աջարան ավտոմայրուղիները, շահագործման հանձնվեցին Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթը, մայրաքաղաքի «Զվարթնոց» ու «Էրեբունի», ինչպես նաև Լենինականի նոր օդանավակայանները, սակայն հանրապետության լեռնային ու նախալեռնային գյուղական շրջաններում ճանապարհների խիստ կարիք էր զգացվում, իսկ եղածների մեծ մասն էլ գտնվում էր ծայրահեղ անբարեկարգ վիճակում։ Դրան գումարվում էր նաև տրանսպորտի ոչ ռիթմիկ աշխատանքը, որի հետևանքով շատ գյուղեր, հատկապես ձմռան ամիսներին կտրվում էին շրջկենտրոններից։ Այս ամենը հանգեցնում էր տեղի բնակչության սոցիալ-տնտեսական կացության վատթարացմանը և նրա արտահոսքին դեպի խոշոր քաղաքներ։ Սա իր հերթին բացասաբար էր անդրադառնում քաղաքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, նոր դժվարություններ էին առաջանում քաղաքային բնակչությանը աշխատանքով, պարենամթերքով, ջրով, տրանսպորտով, բնակարաններով ապահովելու գործում։

Աստիճանաբար վատթարանում էին հանրապետության բնակչության բարեկեցության պայմանները, որոնք 1960—70-ական թթ. ԽՍՀՄ-ում նախկինում տիրող ցածր կենսամակարդակի համեմատությամբ, որոշ չափով բարելավվել էին։ Նշված տարիներին ողջ երկրում, այդ թվում և Հայաստանում, բարձրացվեց աշխատավորների աշխատավարձը, որը գոյատևման նվազագույն պայմաններ ապահովելու իր միտումներից հասավ հարաբերական բարեկեցիկ պայմաններ ստեղծելու մակարդակի։ Ավելացվեցին ծերության կենսաթոշակների չափերը, որոնք թեև բավական ցածր էին, բայց զգալիորեն գերազանցում էին մինչև 1950-ական թթ. կեսերը գոյություն ունեցող կենսաթոշակների մակարդակը։

Հանրապետության քաղաքային բնակչության որոշակի մասը, որը մինչ այդ ապրում էր կոմունալ հարմարություններից զուրկ, ընդհանուր բնակարաններում ու խարխուլ տնակներում, ապահովվեց հարմարավետ բնակարաններով։ Գյուղերում, հողաշեն խրճիթներին ու հյուղակներին սկսեցին փոխարինել քարե առանձնատները։ Հայաստանի ամենահեռավոր անկյուններն անգամ մուտք էին գործել էլեկտրական էներգիան, ռադիոն, հեռուստացույցը, սառնարանը, լվացքի մեքենան և այլ անհրաժեշտ կենցաղային ապրանքներ։ Ժողովուրդը սկսեց ավելի լավ ու ճաշակով հագնվել։ Որոշ չափով բարելավվեց նաև սննդի վիճակը։ Մսեղենն ու կաթնեղենը, թեև ընդհատումներով, բայց, համենայն դեպս, մինչև 1970-ական թթ. վերջերը հանրապետության ազգաբնակչության օգտագործած հիմնական սննդամթերքներն էին և մատչելի՝ գրեթե բոլորին։

Սակայն, խոսելով 1960—70-ական թթ. Հայաստանի բնակչության բարեկեցության աճի մասին, մեկ անգամ ևս հարկ է նշել, որ այն տպավորիչ էր զուտ միայն 30—40-ական թթ. երկրում տիրող թշվառ իրավիճակի համեմատությամբ։ Ինչ վերաբերում է տվյալ ժամանակաշրջանում զարգացած երկրների կենսամակարդակների հետ համեմատվելուն, ապա ինչպես ողջ Խորհրդային Միությունը, այնպես էլ մեր հանրապետությունը, անհուսալիորեն հետ էին մնում։ Եվ նույնիսկ նման համեստ բարեկեցության պայմաններում Հայաստանում իշխող կոմունիստական վարչակարգը, զուրկ լինելով որևէ ինքնուրույնությունից, շարունակում էր հնազանդորեն իրագործել տեխնոկրատական կենտրոնի հետևողականորեն պարտադրած՝ բաշխման մնացորդային սկզբունքի տնտեսական սին քաղաքականությունը։ Այսինքն՝ սոցիալական կարիքների բավարարումը հիմնականում իրականացվում էր արտադրության միջոցների ավելացման համար նախատեսված, բայց ինչ-ինչ պատճառներով չիրացված կապիտալ ներդրումների հաշվին։ Իսկապես, հան-

բապետության պետական բյուջեից սոցիալ-մշակութային կարիքների համար նախատեսված ծախսերի տեսակարար կշիռը 1970-ական թթ. կեսից աստիճանաբար սկսեց նվազել։ Այսպես՝ եթե 1975 թ. այն կազմում էր 46,6 տոկոս, ապա 1980 թ.՝ 46,1, իսկ 1985 թ.՝ միայն 45 տոկոս[24]։ Դրա հետևանքով լուրջ դժվարություններ առաջացան բնակչության բնակարանային կարիքների բավարարման (բնակարանային շինարարության պլանների խրոնիկական թերակատարումների պատճառով էլ ավելի սրվեց բնակարանային խնդիրը), կուլտուր-կենցաղային և բուժսպասարկման ապահովման ասպարեզներում։ 1980-ական թթ. սկզբներից հանրապետությունում հիվանդանոցների, պոլիկլինիկաների, մանկապարտեզների և նման այլ հաստատությունների խիստ պակաս սկսեց զգացվել։ Դրա հետ մեկտեղ գոյություն ունեցող նման հաստատությունների մեծ մասը, իրենց հնացածությամբ ու անհարմարավետությամբ, հեռու էին ժամանակի պահանջները բավարարելուց։ Այս ամենը զուգորդվելով հանրապետության կենսոլորտի խիստ աղտոտվածության հետ, կործանարար ազդեցություն էր թողնում Հայաստանի ազգաբնակչության առողջության վրա։

Այսպիսով, հանրապետության բնակչության սոցիալական ապահովության ոլորտում լուրջ դժվարություններ էին կուտակվել, որ հանգեցնում էր նրա կենսամակարդակի անկմանը։ Վերջինս հատկապես ցայտուն էր դրսևորվում ազգաբնակչության աշխատավարձի բնագավառում։ 1970-ական թթ. վերջին, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ ՀԽՍՀ-ում աշխատավորների միջին աշխատավարձը ամսեկան կազմում էր 150—200 ռ., այն դեպքում, երբ 4 անձից բաղկացած ընտանիքի (երկու մեծահասակ և երկու երեխա) պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ էր ամսեկան առնվազն 800 ռուբլի[25]։ Ցածր աշխատավարձը, իր հերթին հանգեցնում էր աշխատանքի նկատմամբ մարդկանց շահագրգռվածության վերացման։ Այսպես՝ եթե 1980-ական թթ. կեսին մեկ աշխատանքային օրը Շվեդիայում արժեր 30 դոլլար, ԳՖՀ-ում՝ 28, Ավստրիայում՝ 24, Ֆրանսիայում՝ 15, ապա Խորհրդային Միությունում, այդ թվում և Հայաստանում՝ միայն 1 դոլլար[26]։ Իսկ էժան աշխատանքը հետաքրքրությունից ու պատասխանատվությունից զուրկ անորակ աշխատանք է։ Վերջինիս տարածմանը նպաստում էր նաև աշխատավորական տարբեր խմբերի աշխատավարձերի լայնորեն կիրառվող «հավասարեցման» սոցիալիստական սկզբունքը։ Այս ամենը հանգեցնում էր հասարակության մեջ հատուկ և ոչ անվնաս մի խավի՝ լյումպենականության հանդես գալուն, որի համոզմունքը չաշխատելն է և աշխատողներին խանդարելը։ Օգտվելով որակյալ աշխատուժի պակասից, շատ ձեռնարկություններում և կազմակերպություններում լյումպենները, ինչպես աշխատանքի կազմակերպման ու վարձատրման, այնպես էլ կադրային քաղաքականության հարցերում թելադրում էին իրենց պայմանները։ Դա հանգեցնում էր արտադրական հարաբերությունների էրոզիայի, որը պայմանավորված էր հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների՝ ամեն գնով վերադաս մարմինների ցուցումներն ու հրահանգները կատարելու ձգտումով։ Դրա հետևանքով տեղի էր ունենում աշխատանքային կոլեկտիվների առողջ մասի կազմալուծում, որը հանգեցնում էր աշխատանքի արդյունավետության անկմանը և սոցիալ-տնտեսական ճգնաժամի առաջացմանը։ Նշված երևույթներն իրենց արտացոլումն էին գտնում նաև հանրապետության գիտության ու մշակույթի բնագավառներում, որը խիստ բացասաբար էր անդրադառնում Հայաստանի գիտատեխնիկական ու մշակութային զարգացման վրա։ Իշխող կոմունիստական վարչակարգը այս ոլորտներում ևս կիրառելով ղեկավարման

---

24 Народное хозяйство Армянской ССР в 1985 году, с. 328.

25 Л. А. Гордон, Э. В. Клопов, Что это было? Размышления о предпосылках и итогах того, что случилось с нами в 30-40-е годы, М., 1989, с. 288.

26 Известия, 19. V. 1990.

ավտորիտար մեթոդներ ու մանր վարչական խնամակալության սկզբունքներ, հանրապետության ազգային հարստությանը գիտատեխնիկական ու ստեղծագործ մտավորականությանը, պարտադրում էր ծառայելու զուտ իր գաղափարախոսությանը և դրա հիման վրա մշակված սոցիալ-տնտեսական քաղաքականությանը։ Ստեղծվել էր իշխանությունների լայն հովանավորությունը վայելող մտավորականության ներկայացուցիչների արտոնյալ մի շերտ (նոմենկլատուրային մտավորականություն), որը գիտության ու մշակույթի բնագավառներում հիմնականում բարձր պաշտոններ զբաղեցնելով, հնազանդորեն ծառայում էր կուսակցական-պետական վերախավին, ասես կերպ խոչընդոտում բազմակարծությանն ու ազատ մրցակցությանը, հալածում իսկապես տաղանդավոր, առաջադեմ և իսքնուրույն մտածող անհատականություններին։ Դրա ապացույցն էր հայ ժողովրդի հանճարեղ բանաստեղծներ Պարույր Սևակի (ողբերգորեն զոհվեց 1971 թվականին) և Հովհաննես Շիրազի (մահացավ 1984 թվականին) ստեղծագործությունների հրատարակումը պարբերաբար խափանելն ու արհեստականորեն ձգձգելը կամ էլ տաղանդաշատ նկարիչ Սինաս Ավետիսյանի (ողբերգորեն զոհվեց 1975 թվականին) ցուցահանդեսների կազմակերպման արգելքները։ Այս ամենին գումարվում էր նաև մտավորականության ծանր սոցիալ-տնտեսական կացությունը, որը նրա աշխատանքի ոչ պատշաճ վարձատրման հետևանք էր։ Խորհրդային պետությունն իր ավելի քան յոթանասնամյա պատմության ընթացքում կառավարման ապարատի ապաշնորհության և ձեռնարկությունների անտնտեսվարության հետևանքով ամեն տարի միլիարդավոր ռուբլիներ էր կորցնում, որոնք կարող էին ներդրվել գիտության ու մշակույթի զարգացման բնագավառներում։ Այս առումով, աշխարհում լայն թափ ստացած գիտատեխնիկական հեղափոխության ծավալման պայմաններում, հատկապես կարևոր էր գիտության նյութական հիմքի հզորացումը, որն Հայաստանում խիստ դանդաղ էր ընթանում։ Դրա հետևանքով նույնիսկ գիտատեխնիկական դարաշրջանին այնքան անհրաժեշտ մտավոր աշխատանքով զբաղվածների թվաքանակի աճի գործընթացը հանրապետությունում հանգեցնում էր տնտեսական լարվածության ու սոցիալական հակասությունների սրման։ Վերջինիս մեծ չափով նպաստում էր նաև ժողովրդական տնտեսության պահանջմունքները զգալիորեն գերազանցող ինժեներատեխնիկական և ընդհանրապես մտավոր աշխատանքով զբաղվող կադրերի պատրաստման տեմպերի չվերահսկվող աճը։ Խորհրդային հասարակությունը բնորոշ զիգզագիզմով առաջապող հանրապետական համապատասխան գերատեսչությունները, անտեսելով բարձրագույն կրթությամբ կադրերով համալրվելու ժողովրդական տնտեսության ճյուղերի ունեցած իրական պահանջմունքներն ու հնարավորությունները, տարեցտարի ավելացնում էին բուհերի ընդունելության չափերը։ Այսպես, եթե 1960 թվականին Հայաստանում բարձրագույն ուսումնական [illegible] ունեցողներին ընդունվել էր մոտ 5 հազար մարդ, ապա 1985 թվականին ավելի քան 11,8 հազար, իսկ շրջանավարտների թվաքանակը, այդ նույն [illegible] կահատվածում, 3,2 հազար մարդուց հասավ 11,5 հազարի[27]։ Եվ դա այն դեպքում, երբ 1985 թվականին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների ընդհանուր թիվը արդեն անցնում էր 363 հազար մարդուց[28]։ Անշուշտ, բարձր կրթական մակարդակ ունեցող մեծաքանակ մասնագետների առկայությունը գիտաինդուստրիալ զարգացման կարևորագույն գրավականն է, սակայն երբ մտավոր աշխատանքով զբաղվածների թվաքանակն աճում է գիտատեխնիկական հեղափոխությանը համապատասխան տեմպով, իսկ ինքը՝ գիտատեխնիկական հեղափոխությունը չի խորանում, ապա բազմաքանակ մասնագետների առկայությունը դառնում է ավելորդ։ Հասարակությունը

---

27 Народное хозяйство Армянской ССР в 1985 году, с. 295, 296.

28 Նույն տեղում, էջ 216։

ձեռք է բերում գիտաինդուստրիալ բնույթ, բայց այն չի տալիս ցանկալի արդյունք, քանի որ արտադրությունը մնում է «մինչ գիտատեխնիկական» սակարդակի վրա։ Հենց այս պատճառով էլ Հայաստանում կիրառական գիտության և փորձարարական, կոնստրուկտորային մշակումներն ունեին ցածր արդյունավետություն։

Միևնույն ժամանակ լուրջ դժվարություններ էին զգացվում նաև գիտատեխնիկական հեղափոխության պահանջները համապատասխան բանվորական որակյալ կադրերով բավարարելու ասպարեզում։ Թեև 1960—1980-ական թթ. Հայաստանում անընդհատ աճում էր բանվոր դասակարգի թվաքանակը և այն 1960 թվականի 303 հազարից 1985 թվականին հասավ 950 հազարի, որը կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության (ներառյալ ընտանիքների չաշխատող անդամները) շուրջ 65 տոկոսը[29], սակայն հանրապետությունում գոյություն ուներ բանվորական կադրերի և արտադրության զարգացման մակարդակների զգալի անհամամասնություն։ Վերջինս հիմնականում բանվորական կադրերի պատրաստման բնագավառում տեղ գտած թերությունների հետևանք էր։ Չնայած միայն 1970—1985 թթ. ընթացքում ՀԽՍՀ պրոֆտեխնիկական կրթության համակարգում պատրաստվել էր 238 հազար մասնագետ, իսկ անմիջապես արտադրությունում ուսուցման միջոցով նոր մասնագիտություններ էին ձեռք բերել 536 հազար բանվորներ[30], սակայն գիտատեխնիկական առաջընթացը պայմանավորող արդյունաբերական նորագույն ճյուղերում (սարքաշինություն, էլեկտրամեքենաշինություն, էլեկտրոնիկա և այլն) սպասարկող բարձրորակ բանվորական կադրերի որոշակի պակաս էր զգացվում։ Դա ամենից առաջ հանրապետության պրոֆտեխուսումնարանների ժամանակի պահանջներին չհամապատասխանող մասնագիտացման հետևանքն էր։ Այս հաստատությունները ավելի մեծ թվով խառատներ, փականագործներ, ոսկերիչներ, խոհարարներ էին պատրաստում, քան կարգավորողներ, օպերատորներ, տեխնիկներ և գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանին անհրաժեշտ այլ մասնագետներ։ Կարևորագույն պատճառներից էին նաև պրոֆտեխուսումնարանների թույլ կապը հանրակրթական դպրոցների հետ և հատկապես սովորողների մեջ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների վատ կազմակերպումը։ Հայաստանում դպրոցականների զգալի մասը (հատկապես քաղաքներում) գերադասում էր ուսումը շարունակել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, իսկ պրոֆտեխնիկական կրթության համակարգը հիմնականում համալրվում էր գյուղական երիտասարդներով (այստեղ որոշիչ դեր էր խաղում գյուղից դուրս գալու և խոշոր քաղաքներում, մասնավորապես Երևանում, ապրելու ու աշխատանքի տեղավորվելու հեռանկարը), ինչպես նաև՝ քաղաքի հանրակրթական դպրոցների թույլ առաջադիմություն և ցածր կարգապահություն ունեցող աշակերտներով։ Պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարաններում սովորողների որոշակի մասը, այստեղի իր ուսումնառությունը հիմնականում դիտում էր որպես բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու համար առավելություններ ձեռք բերելու միջոց։ Ուստի, նրանք ուսումնարաններում համապատասխան բանվորական մասնագիտություններ ձեռք բերելուց հետո ոչ թե գնում էին արտադրություն, այլ ամեն կերպ ձգտում էին իրենց ուսումը շարունակել բուհերում, իսկ անհաջողության դեպքում՝ գերադասում էին «թեթև» և համեմատաբար բարձր վարձատրվող աշխատանքի տեղավորվել։

Այսպիսով, 1965—1985 թթ. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառներում լուրջ դժվարություններ գոյություն ունեին, որոնք գնալով էլ ավելի էին խորանում։ Դա բնորոշ էր ողջ Խորհրդային Միությանը, քանի որ վարչահրամայական համակարգի վրա հիմնված հասարակարգում

29 Նույն տեղում, էջ 211։

30 Նույն տեղում, էջ 217։

անհնար էր ապահովել տվյալ ժամանակաշրջանի պահանջները բավարարող տնտեսության զարգացում, համընդհանուր ինտենսիվացում, գիտատեխնիկական հեղափոխության լայն ծավալում, սոցիալական արմատական վերափոխումների իրագործում։ Լավագույն դեպքում այստեղ փոխվում էին սոցիալ-տնտեսական զարգացման տարբերակները, որոնք դուրս չէին գալիս վարչա-հրամայական համակարգի սահմաններից։ Նույնիսկ ողջ ԽՍՀՄ-ին բնորոշ մեծաքանակ վարչական աշխատողների առկայության համեստությամբ Հայաստանում նրանք բավական մեծ թիվ էին կազմում։ Այսպես՝ 1980-ական թթ. մեր հանրապետությունում գոյություն ունեին ավելի մեծ թվով նախարարություններ և գերատեսչություններ, քան ՌԽՖՍՀ-ում։ Եթե Ռուսաստանում հանրապետական նախարարություններին ենթակա ձեռնարկություններում ու կազմակերպություններում աշխատող յուրաքանչյուր 10 հազար մարդուն ընկնում էր այդ նախարարությունների կառավարման ապարատի 9 աշխատակից, Ուկրաինայում՝ 19, Բելառուսում՝ 31, Ուզբեկստանում և Ղազախստանում՝ 30, ապա Հայաստանում 68 աշխատակից[31]։ Ուռճացած բյուրոկրատական ապարատը ամեն կերպ խոչընդոտելով հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը, էլ ավելի էր ամրապնդում իր դիրքերը։ Սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց, ընդլայնվում էին կուսակցական, պետական մարմինների գագաթնակետերում գտնվող պաշտոնյաների արտոնությունները, ի սեր որոնց, վերջիններս դառնում էին կենտրոնական միութենական իշխանավորների հլու կամակատարը և ամեն ինչ անում նրանց բարեհաճությանը արժանանալու համար։ Հայաստանի կուսակցական-պետական բյուրոկրատիայի վերնախավի ներկայացուցիչների մեծ մասը հիմնականում գրեթե զուրկ էր ազգային պետական մտածողությունից, որը զոհաբերվել էր զուտ անձնական, նեղ շահերին։ Հանրապետության իշխանության վերին ատյաններում կային նաև հայ ժողովրդին նվիրված և նրա ազգային պետական շահերին ծառայելու ձգտումով օժտված ազնիվ կուսակցական, պետական գործիչներ։ Սակայն ԽՍՀՄ-ում տիրապետող կայսերական կոմունիստական վարչակարգը չէր հանդուրժում հանրապետություններում ազգային նկարագիր ունեցող գործիչների գոյությունը և նրանց հեռացնում էր իշխանության բարձունքներից։

Քննվող ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցությունը, իր ամենատիրության հետևանքով, քաղաքական կազմակերպությունից վերածվել էր տնտեսական խնդիրների հետ սերտորեն ինտեգրացված պետական կառավարման մարմնի, որի վերնախավի ձեռքին էր կենտրոնացած ողջ իշխանությունը։ Կուսակցության շարքային անդամները վերածվել էին հսկա բյուրոկրատական համակարգի պտուտակների, որոնց հետ ոչ ոք հաշվի չէր նստում։ Փաստորեն բազմակուսակցականության բացակայության պայմաններում կոմկուսի շարքերն անցած մարդկանց մեծ մասը ԽՄԿԿ-ին անդամագրվում էր ոչ թե գաղափարական մղումներից դրդված, այլ իր համար պաշտոնական առաջխաղացում կամ ինչ-ինչ արտոնություններ ապահովելու նպատակով։ Պաշտոնները գերազանցապես բաշխվում էին վերադասներին անձնական նվիրվածության, համերկրացիության, հովանավորչության և ոչ թե գործնական հատկանիշներով։ Դրա հետևանքով, ծաղկում էին կաշառակերությունը, հավելագրումներն ու աչքակապությունները, խախտվում էին օբենքները, ոտնահարվում սոցիալական արդարությունը։ Կաշառված կուսակցական-պետական բյուրոկրատիան, վստահ լինելով իր ամենաշնորհությանն ու անպատժելիությանը, ավելի ու ավելի բացահայտորեն էր դաշինք կնքում հանրապետությունում կազմավորված մաֆիայի հետ։ Այս ամենը հանգեցնում էր կառավարման բոլոր օղակների բարոյական այլասերմանն ու կազմալուծմանը։ Առանձին ազնիվ քաղաքացիների և անկաշառ կուսակցական-պետական գործիչների ահազանգերը խլացվում էին երևակայական բարեհաջո-

[31] Население и трудовые ресурсы. Справочник. М., 1990, с. 9—10.

ղության և բարգավաճման շեփորների հնչյունների ներքո։ Իսկ առավել անհնազանդների հետ հաշվեհարդար էին տեսնում նրանց աշխատանքից ապօրինաբար հեռացնելով, կուսակցությունից վտարելով, այլախոհների շարքը դասելով, հոդեբուժարաններ ու բանտեր նետելով և լայնորեն կիրառվող բռնության զանազան այլ մեթոդներով։ Կոմունիստական վարչակարգի տիրապետման պայմաններում թեկուզ և չնչին ժողովրդավարական տարրերի արմատավորման անհնարինության գործում հայ ժողովուրդը համոզվեց դեռևս 1960-ական թթ., երբ նա առաջինը փորձեց օգտվել խրուշչովյան հարաբերական ազատություններից և արտահայտել իր իղձերը։ 1965 թվականին լրացավ 1915 թվականին թուրքական իշխանությունների կազմակերպած արևմտահայերի ցեղասպանության 50 տարին։ Այս ողբերգական տարելիցի կապակցությամբ ապրիլի 24-ին Երևանում համազգային մեծ ցույց կազմակերպվեց, որը Խորհրդային Միության պատմության մեջ առաջին տարերային և զանգվածային ելույթն էր։ Սակայն Մոսկվայի հրահանգով ներքին գործերի նախարարության և ՊԱԿ-ի համապատասխան ուժերի միջոցով ցույցը դաժանորեն ցրվեց, իսկ նրա նախաձեռնողները խստորեն պատժվեցին։ Չնայած դրան, հետագա տարիներին ևս այս հարցը, Ղարաբաղի և Հայաստանի վերամիավորման խնդրի հետ մեկտեղ (որի նպատակով նույնիսկ ստորագրություններ հավաքվեցին և ուղարկվեցին Մոսկվա), բազմիցս բարձրացվում էր հանրապետության լայն հասարակայնության կողմից։ Սակայն կենտրոնական իշխանությունները ոչ միայն բացահայտ արհամարհական վերաբերմունք էին ցուցաբերում հայ ժողովրդի այս արդարացի պահանջներին, այլև զանազան միջոցներով ճնշում էին ազգային ձգտումների իրականացմանը ուղղված ամեն մի փորձ։

Այսպիսով, 1965—1985 թվականների ընթացքում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում հանդես եկող դժվարություններին զուգընթաց հասարակական-քաղաքական կյանքում աստիճանաբար խորանում էին նաև լճացման երևույթները։ Այս ամենը կործանարար ազդեցություն էր թողնում հանրապետության բարոյական կլիմայի վրա, առաջացնելով սոցիալական անտարբերություն, ղեկավար կադրերի հեղինակության անկում, թերհավատություն պաշտոնական խոսքի նկատմամբ։ Աշխատավորները էլ ավելի էին օտարվում ընդհանուր արտադրամիջոցներից և իշխանությունից՝ կորցնելով արդարության նկատմամբ հավատն ու աշխատանքային խանդավառությունը։ Պետական և կոլտնտեսային կոոպերատիվ սեփականությունը ավելի ու ավելի էր ընկալվում որպես ոչ ոքի չպատկանող սեփականություն, ինչի հետևանքով պետական ունեցվածքի հափշտակությունները համատարած բնույթ էին ընդունել։ Աշխատանքը, ի փառս որի ինչքան էլ շքանշաններ ու կոչումներ բաժանեին, ավելի ու ավելի էր արժեզրկվում՝ ինչպես նյութապես, այնպես էլ բարոյապես։ Մի խոսքով ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ ՀԽՍՀ-ում, քայլ առ քայլ խորանում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը, որի առաջացման ողջ պատասխանատվությունը ընկնում էր մենիշխան կոմունիստական կուսակցության վրա։

НАЗРЕВАНИЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО И ПОЛИТИЧЕСКОГО КРИЗИСА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1965—1985 ГОДАХ

Р. Л. АЗИЗБЕКЯН

Резюме

В 1965—1985 гг. экономика Армянской ССР развивалась экстенсивным путем, который был характерен для всего народного хозяйства СССР. По темпам роста промышленного производства Армянская ССР

занимала одно из высоких мест в стране. Однако по качественным показателям промышленная продукция республики не только значительно отставала от мирового уровня, но и уступала даже низкокачественному производству некоторых союзных республик. Количественное развитие промышленности Армении сопровождалось игнорированием экологических, демографических и социальных проблем.

В сельском хозяйстве неполноценно использовались его и без того ограниченные возможности, медленно совершенствовалась отраслевая структура, плохо организовывались сельскохозяйственные работы.

Грубые просчеты допускались также в сферах капитального строительства, науки и культуры, размещения производительных сил, подготовки и переподготовки кадров.

Все это приводило к снижению жизненного уровня населения и укреплению позиции партийно-государственной бюрократии. В верхних эшелонах власти процветали протекционизм, взяточничество и коррупция, что у людей рождало социальное безразличие.

В Армянской ССР шаг за шагом назревал социально-экономический и политический кризис, вся ответственность которого падала на авторитарно руководящую коммунистическую партию.